ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք.Եղեգնաձոր

N 02 «18» հունվարի 2008 թ.

«ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1911-Ն որոշման («Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. նոյեմբերի 2-ի թիվ 1911-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2007 թ. սեպտեմբերի 27-ի թիվ 1218-Ն որոշման խմբագրությամբ),

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետի 23.05.2007 թ. թիվ 50 որոշման 4-րդ կետը,

ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ - 66-րդ, 116-րդ հոդվածներով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ, 18-րդ և 22-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել «ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերության հաշվեկշիռը 01.01.2008 թ. դրությամբ (կցվում է):

2. Հաստատել «ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերության հաշվեկշռային մեթոդով հաշվարկված զուտ ակտիվների մեծությունը՝ 66,678,000 (վաթսունվեց միլիոն վեց հարյուր յոթանասունութ հազար) դրամ, իսկ ընկերության կողմից թողարկված 1,000 դրամ անվանական արժեքով մեկ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսի հաշվեկշռային մեթոդով հաշվարկված շուկայական արժեքը՝ 2,508 (երկու հազար հինգ հարյուր ութ) դրամ:

3. Հաստատել «ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերության բաժանիչ (առանձնացման) հաշվեկշիռը («ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերության հաշվեկշիռները առանձնացումից առաջ և հետո 01.01.2008 թ. դրությամբ, «ՁԱՌԻԹԱՓԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության հաշվեկշիռը):

4. Հաստատել «ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերության առանձնացման (առանձնացման ձևով վերակազմակերպման) կարգը (կցվում է):

5. Հաստատել «ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերության հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի փոխարկման կարգը «ԶԱՌԻԹԱՓԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի (Ընկերությունը չի տեղաբաշխել ոչ մի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր, չունի այլ արժեթղթեր) (կցվում է):

6. Հաստատել առանձնացման ճանապարհով վերակազմակերպված «ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի մեծությունը՝ 17,463,000 (տասնյոթ միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար) դրամ՝ 1,000 դրամ անվանական արժեքով 17463 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս:

7. Հաստատել «ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը:

8. Սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերն ուժի մեջ են մտնում «ԶԱՌԻԹԱՓԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության պետական գրանցման պահից:

9. «ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենին (Ռոբերտ Ասլանյան) հանձնարարել.

- բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմին՝ ընթացիկ գրանցում կատարելու միջոցով ընկերության վերակազմակերպմամբ պայմանավորված փոփոխությունները վավերացնելու խնդրանքով,

- առանձնացված «ԶԱՌԻԹԱՓԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության պետական գրանցումից հետո մեկամսյա ժամկետում կազմակերպել գույքի հանձնում-ընդունումը:

ՀՀ Վայոց Ձորի մարզպետ՝ Վ. Մաթևոսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի
մարզպետի 2008 թ. հունվարի 18 ի
թիվ 02 որոշմամբ

«ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ»

փակ բաժնետիրական ընկերության հաշվապահական հաշվեկշիռը 01.01.2008 թ. դրությամբ

(կազմված է 15.01.2008 թ. և բաղկացած է 1 թերթից)

ԱԿՏԻՎ	տող	Հաշվետու ժամանակաշրջանի վերջին (հազ. դրամ)
I. Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	010	66183.0
Հողամաս	071	507.0
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	66690.0
II. Ընթացիկ ակտիվներ		
Նյութեր	090	456.0
Արագամաշ առարկաներ	110	784.0
Տրված ընթացիկ կանխավճարներ	150	0.0
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	160	0.0
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	0.0
Այլ դեբիտորական պարտքեր	180	0.0
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	200	42.0
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	1282.0
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	67972.0
III. Սեփական կապիտալ		
Կանոնադրական կապիտալի զուտ գումար	240	26587.0
Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ	260	0.0
Կուտակված շահույթ	270	47.0
Սեփական կապիտալի այլ տարրեր	290	39537.0
Ընդամենը սեփական կապիտալ	300	66171.0
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Ակտիվներին վերաբերող շնորհներ (հող)	330	507.0
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	360	507.0
V. Ընթացիկ պարտավորություններ		
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390	472.0
Կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	548.0
Կրեդիտորական պարտքեր սոց. ապահովագրության գծով	420	274.0
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	430	0.0
Եկամուտներին վերաբերող շնորհներ	460	0.0
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	1294.0
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	67972.0

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի
մարզպետի 2008 թ. հունվարի 18-ի
թիվ 02 որոշմամբ

«ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ»
փակ բաժնետիրական ընկերության
առանձնացման ճանապարհով վերակազմակերպման

Կարգ և պայմաններ

(կազմված է 15.01.2008 թ. և բաղկացած է 3 թերթից)

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

1. «ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպվում է առանձնացման միջոցով՝ «ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) և «ՋԱՌԻԹԱՓԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ առանձնացման հետևանքով ստեղծվող ընկերություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի դրույթների համաձայն, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ, 22-րդ, 25-րդ, 26-րդ, 30-րդ-37-րդ, 43-րդ, 51-րդ, 52-րդ, 57-րդ, 58-րդ, 67-րդ, 68-րդ, 74-րդ, 76-րդ և այլ հոդվածների իրավասությամբ ու պահանջներով: Սույն կարգն ու պայմանները հանդիսանում է Ընկերության ներքին իրավական ակտ:

2. Սույն կարգով ու պայմաններով (այսուհետև՝ կարգ) սահմանվում է Ընկերության առանձնացման միջոցով 9124 / 26587 (մոտ 34.3 %) և 17463 / 26587 (մոտ 65.7 %) վերակազմակերպման համամասնությամբ պայմանավորված Ընկերության ակտիվների, պարտավորությունների ու զուտ ակտիվների նույն համամասնությամբ առանձնացման կարգն ու պայմանները:

3. Ընկերության վերակազմակերպմամբ պայմանավորված ակտիվների, պարտավորությունների, կանոնադրական կապիտալի ու սեփական կապիտալի այլ հոդվածների բաշխումը Ընկերության ու առանձնացման հետևանքով ստեղծվող ընկերությունների միջև կատարվում է բաժանիչ հաշվեկշռին համապատասխան, որն ապահովում է Ընկերության գույքի և պարտավորությունների համամասնորեն բաշխումը՝ Ընկերության և առանձնացման հետևանքով ստեղծվող ընկերության միջև:

Հոդված 2. Վերակազմակերպմամբ պայմանավորված Ընկերության ակտիվների առանձնացումը

1. Սույն կարգին համապատասխան Ընկերության ակտիվների 9124 / 26587 մասը փոխանցվում է առանձնացման հետևանքով ստեղծվող ընկերության սեփականությանը՝ այդ ընկերության հիմնադրման մասին Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետի որոշման ընդունումից և պետական գրանցումից հետո:

2. Առանձնացման հետևանքով ստեղծվող ընկերությանը փոխանցվող ակտիվների կազմի մեջ մտնող գույքը փոխանցվում է առանձնացման հետևանքով ստեղծվող ընկերության սեփականությանը՝ վերջինիս պետական գրանցման պահից:

3. Առանձնացման հետևանքով ստեղծվող ընկերությանն է փոխանցվում բաժանիչ հաշվեկշռում նշված գույքը, կրեդիտորական պարտավորությունները, այլ իրավունքները:

Հոդված 3. Վերակազմակերպմամբ պայմանավորված Ընկերության պարտավորությունների առանձնացումը

1. Սույն կարգին համապատասխան Ընկերության պարտավորությունների 9124 / 26587 մասը փոխանցվում է առանձնացման հետևանքով ստեղծվող ընկերությանը և վերջինը դառնում է այդ պարտավորությունների գծով իրավահաջորդ (պարտապան)՝ այդ ընկերության հիմնադրման մասին Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետի որոշման ընդունումից և պետական գրանցումից հետո:

2. Ընկերության տնօրենը Ընկերության վերակազմակերպման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում գրավոր ծանուցում է Ընկերության պարտատերերին Ընկերության վերակազմակերպման մասին որոշումն ընդունելու տարվա, ամսվա, ամսաթվի, Ընկերությունը 9124 – 17463 հարաբերակցությամբ առանձնացման միջոցով վերակազմակերպման, գործընթացի մասնակիցների միջև պարտավորությունների բաշխման մասին: Եթե պարտատերը «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն պահանջում է պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում, ինչպես նաև վնասների փոխհատուցում, ապա այդ պահանջի իրավունքի իրականացումը բաշխվում է նույն՝ 9124 – 17463 հարաբերակցությամբ:

Հոդված 4. Վերակազմակերպմամբ պայմանավորված Ընկերության կանոնադրական կապիտալի և սեփական կապիտալի այլ հոդվածների առանձնացումը

1. Սույն կարգին համապատասխան Ընկերության կանոնադրական կապիտալը բաժանվում է 9124 – 17463 հարաբերակցությամբ:

2. Սույն կարգին համապատասխան՝ Ընկերության պետական գրանցում ստացած և կանոնադրությամբ ամրագրված 26,587,000 դրամ կանոնադրական կապիտալը՝ կազմված 26587 (քսանվեց հազար հինգ հարյուր ութսունյոթ) հատ սովորական անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսերից՝ 1,000 (մեկ հազար) դրամ անվանական արժեքով, Ընկերության առանձնացման համամասնությանը համատասխան Ընկերության և առանձնացման հետևանքով ստեղծվող ընկերության միջև բաշխվում է 17,463,000 դրամ՝ կազմված 17463 հատ սովորական անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսերից՝ 1,000 դրամ անվանական արժեքով և 9,124,,000 դրամ՝ կազմված 9124 հատ սովորական անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսերից՝1,000 դրամ անվանական արժեքով, հարաբերակցությամբ:

3. Ընկերության հաշվեկշռում ամրագրված կուտակված շահույթը Ընկերության առանձնացման համամասնությանը համատասխան Ընկերության և առանձնացման հետևանքով ստեղծվող ընկերության միջև բաշխվում է 9124 – 17463 հարաբերակցությամբ, ընդ որում վերակազմակերպման պետական գրանցումից հետո առանձնացված ընկերության հաշվեկշիռում նշված մեծությունը հաշվառվում է հաշվեկշիռի «էմիսիոն եկամուտ» տողում:

Հոդված 5. Եզրափակիչ դրույթներ

1. Սույն կարգն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետի կողմից հաստատվելուց հետո:

2. Ընկերության վերակազմակերպման մասին որոշում ընդունելու պահից մինչև սույն կարգով, ինչպես նաև բաժանիչ հաշվեկշռով նախատեսված ակտիվների և պարտավորությունների ընդունման-հանձնման պահը, բայց ոչ ուշ քան 2008 թ. մարտի 31-ը ներառյալ, Ընկերությունը գործում է իր անունից, սակայն առանձնացման հետևանքով ստեղծվող ընկերությունների հաշվին:

3. «ՋԱՌԻԹԱՓԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերությունը համարվում են ստեղծված՝ պետական գրանցման պահից, իսկ «ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերությունը համարվում է վերակազմակերպված՝ վերակազմակերպման արդյունքում ստեղծված փակ բաժնետիրական ընկերությունների պետական գրանցման պահից:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի
մարզպետի 2008 թ. հունվարի 18 ի
թիվ 02 որոշմամբ

«ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ»
փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի

ՓՈԽԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

«ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» և «ՋԱՌԻԹԱՓԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
փակ բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի
(կազմված է 15.01.2008 թ. և բաղկացած է 1 թերթից)

1. «ՋԱՌԻԹԱՓԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության պետական գրանցումից հետո մեկ ամսվա ընթացքում «ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված 1,000 դրամ անվանական արժեքով թվով 9124 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերը փոխարկվում են «ՋԱՌԻԹԱՓԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության 1,000 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերով, առանց սեփականատիրոջ փոփոխության «ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի ռեեստրում համապատասխան գրառումներ կատարելու և «ՋԱՌԻԹԱՓԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի ռեեստրի բացման, ռեեստրում բաժնետիրոջ անձնական հաշվի ստեղծման, դրանում համապատասխան գրառումներ կատարելու միջոցով «ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված մնացած բոլոր բաժնետոմսերը չեն փոխարկվում:

2. «ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերությունը չի տեղաբաշխել արտոնյալ բաժնետոմսեր, չունի այլ արժեթղթեր: